Ջ/183/1193

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N ԵՔ-ԴՄ- 06

15. 10. 2021 թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահրամ Գասպարյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից «Սփյուռքահայ ուսանողների խորհուրդ» ԵՀԿ-ի, ի դեմս կազմակերպության ղեկավար Սամվել Մկոյանի այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1115 Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11001 Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» միջոցառումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն որոշումը (այսուհետ որոշումներ), Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 10-ի «Կազմակերպությունների ցանկը հաստատելու մասին» N 1692-Ա/2 հրամանը, Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարության կողմից դրամաշնորհների հատկացման մրցույթի հանձնաժողովի 24.09.2021թ. N 04/21 արձանագրությունը «ՀՀ, Արցախի և Սփյուռքի երիտասարդների երկխոսության կամուրջ» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1 Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել 2692.9 հազար (երկու միլիոն վեց հարյուր իննսուներկու հազար ինը հարյուր քսան) ՀՀ դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշումներով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. Սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. Իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. Կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. Իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. Իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. Կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.6. Սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.9. Ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.10. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարվելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:

2.4.11. Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը և հաշվետվությունը:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած

անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Պայմանագրի 1.1 կետում սահմանված գումարի 80%-ը կատարողին հատկացվում է Պայմանագիրը կնքվելուց հետո, իսկ 20%-ը Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ 5 բանկային օրվա ընթացքում:

5.2. Համաձայն «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2021 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման և հաշվետվությունների ընդունման ժամկետը մինչև 2021 թ. դեկտեմբերի 15-ն է:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.2 այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4 Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.5. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.6. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝
Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/

Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Սփյուռքահայ ուսանողների խորհուրդ» ԵՀԿ
ք.Երևան, Մովսես Խորենացի 15
mkoyans@gmail.com

բանկ ՝ Արարատբանկ ԲԲԸ

մ/ճ հասցե՝ Էլիտ Պլազա, Մովսես Խորենացի15

Հ/Հ1510038405360100 , ՀՎՀՀ 01248707

ՀԿ-ի ղեկավար՝

Սամվել Մկոյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված 1
2021թ. հոկտեմբերի 15 -ին
կնքված N ԵՔ-ԴՄ-06 պայմանագրի

ՀՀ, Արցախի և սփյուռքի երիտասարդների երկխոսության կամուրջ դրամաշնորհային ծրագրի

Ծրագրի նկարագրություն Հիմնախնդրի և կարիքի հիմնավորում

Ժամանակակից աշխարհում տեխնոլոգիական զարգացումները հնարավորություն են տալիս մեզ գտնվելով անգամ աշխարհի մյուս ծայրում, ներդրում ունենալ հայրենիքի զարգացման մեջ, մեր գիտելիքներն ու հնարավորությունները ծառայեցնել հայրենիքին: Բայց եթե մենք տեղեկացված չենք նրա խնդիրների և կարիքների մասին, մեր ներդրումը կլինի կիսատ և գուցե ոչ նպատակային: Նույնը կարելի է ասել նաև հակառակ կողմի մասին: Սփյուռքահայ երիտասարդը կարիք ունի ճանաչելու Հայաստանը, ծանոթանալու նրա հարստություններին, բնակիչներին, նրանց առօրյային, կարիքներին ու անհրաժեշտություններին: Ուստի, ստեղծելով միասնական հարթակ, կարելի է նպաստել նրանց միջև ամուր կապի ստեղծմանը, նրանց կարողությունը ծառայեցնել Հայաստան-Սփյուռք փոխադարձ կապի զարգացմանը, համահայկական մասնակցություն պահանջող խնդիրների լուծմանը:

Սփյուռքահայ երիտասարդների հետ մեր ունեցած 11 տարվա աշխատանքային փորձառության ընթացքում բազմիցս համոզվել ենք, որ սփյուռքահայ երիտասարդը Հայաստանում ուսանելու տարիներին բախվում է բազմաթիվ խնդիրների, որոնց լուծման ուղիներ փնտրելու արդյունքում ստեղծվեց ծրագիրը: Մեր փորձը հաստատվեց նաև 2010-2016թթ. արված հետազոտության արդյունքում, որը այս պահին միակն է Հայաստանում և իրականացվել է հենց մեր կազմակերպության կողմից: Բացահայտված հիմնական խնդիրներից է հարմարումը և նոր հասարակության մեջ ինտեգրվելը, ինչպես նաև սփյուռքահայ երիտասարդների քիչ տեղեկացվածությունը Հայաստանի մասին: Մենտալիտետի տարբերությունը, միմյանց հանդեպ ունեցած կարծրատիպերը տեղացի և սփյուռքահայ երիտասարդների համար ստեղծում է անդունդ, կոնֆլիկտների և շփման դժվարությունների պատճառ դառնում: Իսկ նմանատիպ ծրագրերի իրականացումը այդ դժվարությունների հաղթահարման համար հենց նրանց առաջարկն է:

Բացի այդ, 2020թ.-ի պատերազմը ցույց տվեց, որ մեր երիտասարդները պետք է միշտ պատրաստ ու զինված լինեն բոլոր առումներով, անկախ նրանից , աշխարհի որ ծայրում են գտնվում՝ սկսած ինքնակարգավորման, արագ ինքնակազմակերպվելու, տարբեր համագործակցություններ և համատեղ գործեր անելու, մինչև տեխնոլոգիաների տիրապետում օնլայն հարթակում ճիշտ կողմնորոշվելու, տեղեկատվական պատերազմում ուժեղ պայքարելու համար: Այս հագամանքը ստիպում է բոլոր հայ երիտասարդներին մշտապես կատարելագործվել ու լինել համախմբված:

Հենց այս խնդիրների լուծմանն է ուղղված նաև այս ծրագիրը՝ համախմբել ՀՀ-ի, Արցախի և սփյուռքի երիտասարդներին մեկ նպատակի շուրջ, ստեղծել համագործակցության ապահով հարթակ, զինել անհրաժեշտ հմտություններով ինքնակարգավորման, կապեր հաստատելու, շփվելու, SS գործիքները կիրառելու:

Կազմակերպության փորձառությունը

Կազմակերպության առաքելությունն է նպաստել սփյուռքահայ երիտասարդների ինտեգրմանը հայաստանյան կյանք և ապահովել նրանց ներգրավածությունը Հայաստան-

Սփյուռք գործակցության զարգացման գործընթացներում: Առավել մանրամասն տես կից կանոնադրությունում:

Նպատակներին հասնելու համար կազմակերպությունը իր գործունեության 11 տարիների ընթացքում իրականացրել է հարյուրավոր ծրագրեր: Դրանցից կառանձնացնեք վերջին մի քանիսը.

1. Սփյուռքահայ և տեղացի երիտասարդների երկխոսության կամուրջ, 2018թ ՀՀ ԿԳՄՍ նախարարության ֆինանսավորմամբ: Բյուջեն՝ մոտ 2 մլն ՀՀ դրամ:

   Ծրագրի նպատակն էր ստեղծել ապահով և ջերմ շփման մթնոլորտ սփյուռքահայ և տեղացի երիտասարդների միջև: Աջակցել սփյուքռահայ երիտասարդների ինտեգրմանը հայաստանյան կյանք:
2. Ջավախքի, Սփյուռքի և ՀՀ մարզերի երիտասարդնեի գործակցության կամուրջ: 2020թ. ՀՀ ԿԳՄՍ նախարարության ֆինանսավորմամբ: Բյուջեն՝ մոտ 2 մլն ՀՀ դրամ:

   Ծրագրի նպատակն էր Ջավախքի, Սփյուռքի և ՀՀ մարզերի երիտասարդների միջև կառուցել երկխոսության կամուրջ, նպաստել Հայաստան-Սփյուռք-Ջավախք կապի ամրապնդմանը՝ համախմբելով հայ երիտասարդությանը համընդհանուր գաղափարի շուրջ:
3. <<Հոգեբանությունը որպես կամուրջ սփյուռքահայ և տեղացի երիտասրդների միջև>> խորագրով հոգեբանական շաբաթ, 2016թ.: ՀՀ ԿԳՄՍ նախարարության ֆինանսավորմամբ: Բյուջեն՝ մոտ 500 հազար ՀՀ դրամ:

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակն է ՀՀ-ի Արցախի և Սփյուռքի երիտասարդների միջև կառուցել երկխոսության կամուրջ, նպաստել Հայաստան-Արցախ-Սփյուռք կապի ամրապնդմանը՝ համախմբելով հայ երիտասարդությանը համընդհանուր գաղափարի շուրջ:

Ծրագրի խնդիրներն են

• Տարաբնույթ խաղերի, թեմատիկ վարժությունների շնորհիվ մասնակիցների միջև ստեղծել փոխվստահության և փոխհասկացվածության մթնոլորտ,

• Թեմայի շրջանակներում երիտասարդներին զինել անհրաժեշտ և մաքսիմալ կիրառելի գիտելիքներով,

•Ոչ ֆորմալ կրթության չափանիշներով առաջնորդվելով՝ ստեղծել նպաստավոր պայմաններ երիտասարդների ինքնադրսևորման և ինքնաարտահայտման համար:

Ծրագրի ընթացքում նախատեսում ենք մասնակիցներին զինել այնպիսի հմտություններով, որոնք հնարավոր կդարձնեն նրանց միջև փոխշահավետ համագործակցությունների հաստատումը ինչպես իրական կյանքում, այպես էլ վիրտուալ հարթակում: Ծրագրի իրականացման շնորհիվ 30 ՀԱՅ երիտասարդ կհամախմբվեն համընդհանուր շահերի շուրջ, ինչի արդյունքում սփյուռքահայ երիտասարդները կինտեգրվեն հայաստանյան կյանք: Կկոտրվեն կարծրատիպերը այն մասին, որ սփյուռքահայերը և տեղացի հայերը դժվարությամբ են իրար հետ շփման եզրեր գտնում, մտածողությունների տարբերությունը խանգարում է և համարյա միշտ կոնֆլիկտածին է: Որպես ծրագրի շարունակություն՝ ընտրվելու են ծրագրի ակտիվ մասնակիցներից նվազագույնը 10 հոգի մեր կազմակերպության աշխատանքներում մասնակից լինելու համար և նրանց փորձն ու օրինակը փոխանցելու մյուս երիտասարդներին: Բնականաբար, կլինեն շատ համատեղ ծրագրեր ու համագործակցություններ մասնակիցների միջև, որոնց իրականացմանը ևս մեր կազմակերպությունը կաջակցի: Բացի այդ,այս ծրագիրն էլ ինքնին որոշակի առումով արդեն իսկ ապահովում է շարունակականությունը, քանի որ նմանատիպ ծրագրեր իրականացնել արդեն ավանդույթ է մեզ համար և գրեթե ամեն տարի իրականացնում ենք:

Արդյունքում կունենանք 30 երիտասարդ, որոնք ծանոթ են Հայաստանում առկա ամենաարդիական խնդիրներին, գիտակցում են իրենց ներդրման կարևորությունը այդ *խնդիրների լուծման մեջ և տիրապետում են կազմակերպչական, թիմային աշխատանքի,* արդյունավետ հաղորդակցման այլ հմտություններին: Կունենանք նաև սփյուռքահայ և տեղաբնակ երիտասարդների միջև շփման ընդհանուր պլատֆորմ:Եվ որպես երրորդ արդյունք՝ համատեղ ծրագրերի մշակումը և իրականացումը, համագործակցությունները մասնակիցների միջև, որոնք կկազմակերպվեն այս ծրագրի ավարտից հետո թիմերի հետ առանձին աշխատանքների միջոցով: Նրանց մասին կգրվեն փոքրիկ պատմություններ և կիրապարակվեն տարբեր էլեկտրոնային պարբերականներով: Ուստի, վերը նշված գիտելիքները ունեցող և հմտություններին տիրապետող սփյուռքահայ երիտասարդը այլևս չի ունենա ինտեգրման խնդիրներ, ձեռք կբերի տեղացի ընկերներ, կկարողանա ավելի հեշտությամբ հաղորդակցվել մարդկանց հետ, ավելի լավ ճանաչելով Հայաստանը կսկսի ավելի ուշադիր ու սրտացավ վերաբերվել, կսկսի ավելի անկաշկանդ շփվել: Բազմակողմանի տեղեկացված լինելով՝ կկարողանա իր մասնագիտական և այլ հմտությունները նպատակային ծառայեցնել Հայաստանի համար: Ստացած գիտելիքների, հմտությունների, սոցիալական կապիտալի շնորհիվ իրեն ավելի հարմարավետ կզգա Հայրենիքում, որն էլ կնպաստի Հայրենիքից չհեռանալուն: Իսկ ծրագրից ստացած փորձառությունը և արդյունքները հետագայում կօգտագործի ինչպես մեր կազմակերպությունը, այնպես էլ այս ոլորտում գործունեություն ծավալող մյուս կազմակերպությունները:

Այսինքն, ծրագրի արդյունքում կունենանք

- Ընդհանուր հարթակ, որը կմիավորի 30 Հայ երիտասարդի՝ ՀՀ-ից, Արցախից և սփյուռքից,
- Համագործացություններ ՀՀ-ի, Արցախի և սփյուռքի երիտասարդների միջև,
- Առավել մրցունակ, շփման, համագործացության, արագ ինքնակազմակերպման և ինքնակարգավորման հմտություններով զինված 30 Հայ երիտասարդ:

Գործողություններ

Ծրագիրը իրականացվելու է մի քանի փուլով՝

- Նախապատրաստական փուլ
- Բուն իրականացման փուլ
- Ամփոփման և գնահատման փուլ:

Ծրագրի նախապատրաստական փուլում իրականացվելու է հայտարարության տարածումը, որը իրականացվելու է ֆեյսբուքյան մեր էջի, կայքերի, պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների և երիտասարդական կազմակերպությունների միջոցով: Հայտարարությունը կունենա հետևյալ կետերը. ա) ինչ է իրենից ներկայացնում ծրագիրը, բ) ովքեր կարող են մասնակցել, գ) ինչ նպատակ ունի ծրագիրը, դ) որտեղ և երբ կկայանա, ե) ինչ կտա ծրագիրը մասնակիցներին: Նախապատրաստական շրջանում իրականացվելու է նաև ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը, պայմանագրերի կնքումը, դասավանդող թեմաների հստակեցումը, բաժանվող նյութերի և վկայականների տպագրությունը և այլ աշխատանքներ: Այս փուլում կկատարվի նաև մասնակիցների ընտրությունը, որը կիրականացվի հետևյալ սկզբունքներով՝ հաշվի կառնվի մասնակիցների տարիքը (18-30) և տարածքային տեղաբաշխումը: Ծրագրին կմասնակցեն 30 երիտասարդ՝ 10 սփյուռքից, 10 ՀՀ-ից, 10 Արցախից: Դասընթացները տեղի կունենան 3 օր՝ ուրբաթ, շաբաթ, կիրակի՝ Ծաղկաձորում: Ծրագրի սկզբում, պաշտոնական բացման արարողությունից հետո, կիրականացվեն ծանոթացման և թիմի կառուցման վարժություններ, ընդհանուր ամփոփ ձևով կներկայացվի ծրագիրը, դուրս

կբերվեն մասնակիցների ակնկալիքները: Մասնակիցների միջև փոխվստահության մթնոլորտ ստեղծելու համար թեմաները կընդմիջվեն փոքրիկ հոգեբանական խաղ-վարժություններով, իսկ թեմաներից՝ հետո ամեն երեկո, կլինեն ոչ ֆորմալ հանդիպումներ՝ խաղեր, ազատ շփում, կունենանք հատուկ հյուրեր մշակութային և հասարակական գործիչներ (նախնական բանավոր փոխհամաձայնության ենք եկել ժողովրդական երգիչներ Կարինե Մուսիկյանի և Մավր Մկրտչյանի հետ), կլինեն ազգային պարի վարպետության դասեր,<<Վանա ծովուն արշալույսը>> ֆիլմի դիտում-քննարկում և այլն: Թեմաները հետևյալն են՝ 1.Երիտասարդների դերը հայրենիք-սփյուռք կապի ամրապնդման հարցում 2.Ծրագրերի կազմակերպում և կառավարում 3.Ազգային արժեքներ և ինքնության պահպանում 4.Հաղորդակցման հմտություններ և կապերի ստեղծում (Networking) 5.Ժամանակակից տեխնալոգիաները որպես Հայաստան –Սփյուռք կապի ամրապնդման գործիք 6.SMM և PR գործիքներ 7.Առաջնորդության էությունը և արդյունավետությունը 8.Արդյունավետ բանակցությունների հմտություններ: Ծրագրի ամբողջ ընթացքում և ավարտից հետո կիրականացվի մոնիտորինգ և վերահսկողություն՝ հնարավոր թերությունները արագ նկատելու և ուղղելու համար: Ծրագրի ավարտից հետո կիրականացվի արդյունքների ամփոփում և վերջնական գնահատում: Կգնահատենք՝ որքանով ենք հասել մեր առջև դրված արդյունքներին, ինչ բացթողումներ են եղել, ինչը կարելի էր ավելի լավ անել ու ինչքանով ենք հասել մեր նպատակին: Մասնակիցներից ևս կստանանք հետադարձ կապ՝ նրանց կարծիքները, մեկնաբանությունները, ինչքանով իրականացան իրենց ակնկալիքները, ինչքանով են վստահ, որ ծրագիրը իրենց կյանքում փոփոխություններ կբերի: Բացի այդ, մասնակիցները ծրագրի ավարտից հետո կլրացնեն անանուն գնահատման թերթիկներ առավել օբյեկտիվ հետադարձ կապ ստանալու համար:

Ինչպես վերոնշյալ թեմաներից երևում է, ծրագիրը արտացոլում է մասնակիցների կարիքներն ու հետաքրքրությունները, քանի որ, 1. Սփյուռքահայ երիտասարդի ինտեգրումը ապահովելու և մասնակիցների միջև փոխվստահության դաշտ ստեղծելու համար իրականացվելու է թիմի կառուցման վարժություններ, բոլոր թեմաները ընդմիջվելու են փոքրիկ հոգեբանական խաղ-վարժություններով, իրականացվելու են սառույց կոտրող վարժություններ և այլն, իսկ թեմաներից հետո ամեն երեկո կլինեն ոչ ֆորմալ հանդիպումներ՝ խաղեր, ազատ շփում, կունենանք հատուկ հյուրեր:2.Ժամանակակից տեխնոլոգիաները մեծ հնարավորություն են տալիս գլոբալիզացիայի այս դարաշրջանում. նույնիսկ աշխարհի ամենահեռու ծայրում գտնվող երիտասարդին իր գիտելիքները կարող է ծառայեցնել ու օգտագործել Հայաստանի զարգացման համար: Դրա համար թեմաներում ներառվել են SS ոլորտի արդիական գործիքներին տիրապետելու թեմաներ: Եվ վերջապես, ունեցած գիտելիքները նպատակային օգտագործելու համար պետք է նաև տեղեկացված լինեն Հայաստանի կարիքներին, բացերին, անհրաժեշտություններին: Մասնակիցները այդ երեք օրերի ընթացքում կծանոթանան միմյանց առանձնահատկություններին՝ խոհանոցային, մշակութային, լեզվական և այլն, ապրելավայրի մասին տեղեկություններին, փորձի փոխանակում տեղի կունենա: Եվ վերջին թեմատիկ ոլորտը կյանքի ընդհանուր հմտությունների ձևավորումն է.կոնֆլիկտների հաղթահարման, կապեր ստեղծելու և այլն, որը ևս նպաստելու է ինչպես սփյուռքահայերի ինտեգրմանը, փոխհամագործակցության հարթակ ստեղծելուն, այնպես էլ նրանց անձնական, հասարակական արդյունավետության բարձրացմանը: Ծրագիրը իրականացվելու է ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանությամբ: Մեծ կարևորություն է տրվելու մասնակիցների ներգրավվածությանը և պրակտիկ աշխատանքներին:

Ծրագիրը կմեկնարկի 2021 թվականի հոկտեմբերի 15-ին և կավարտվի 2021 թվականի դեկտեմբերի 10-ին

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Շաբաթ						
			1	2	3	4	5	6	7
1	Հայտարարության ձևավորում և տարածում (օգտագործելով SMM բոլոր գործիքները)		v	v					
2	Ծրագրի լուսաբանում՝ կայքեր, ռադիո, սոց.ցանցեր			v	v	v	v	v	v
3	Մասնակիցների հայտերի ընդունում և նախնական ընտրություն			v	v				
4	Հարցազրույթ մասնակիցների հետ և վերջնական ընտրություն					v			
5	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման պայմանագրերի կնքում				v	v			
6	Ուղեկցող բաժանվող նյութի փաթեթների կազմում, տպագրություն				v	v			
7	Վկայականների, պաստառի և նոթատետրերի, գրիչների տպագրություն				v	v			
8	Թրեյնինգների իրականացում Ծաղկաձորում					v			

	(Ուրբաթ, շաբաթ, կիրակի								
9	Ծրագրի վերահսկում և գնահատում		v	v	v	v	v	v	
10	Արդյունքների ամփոփում և վերջնական գնահատում						v	v	
11	Արդյունքների տարածում և լուսաբանում						v	v	v
12	Հաշվետվությունների կազմում							v	v

Ծրագրի շահառուները և շահագրգիռ կողմերը

Ծրագրի ուղղակի շահառուները 18-30 տարեկան երիտասարդներն են՝ ՀՀ-ից, Արցախից և սփյուռքից: Ընդհանուր 30 երիտասարդ է մասնակցելու ծրագրին:

Ծրագրի բովանդակությունն այնպիսին է, որ մասնակիցների ձեռք բերած հմտությունները ապահովում են անընդհատ ազդեցություն՝ հաշվի առնելով որ դրանք նաև անձնային հմտություններ են, որոնք կարող են օգնել մեր ծրագրից հետո էլ, ամբողջ կյանքի ընթացքում դրանք հետ չեն աճում: Բացի այդ մասնակիցները կարող են իրենց հմտությունների շնորհիվ դրանք փոխանցեն ուրիշներին:

Այս հանգամանքը երիտասարդների համայքներին ևս շահագրգիր կողմ է դարձնում, չէ որ ինչքան երիտասարդը կրթված է, մրցունակ ու նախաձեռնող, այդքան մեծ կարող է լինել նրա ներդրումը համայնքային կյանքին:
Շահագրգիռ կողմ կարելի է ասել նաև յուրաքանչյուր հայի, որովհետև երիտասարդի ներուժը բացահայտելով, զարգացնելով և Հայրենիքին ծառայեցնելով նպաստում ենք նաև ուժեղ պետության կառուցմանը:

Ռիսկերի գնահատում

Այս պահին հնարավոր ռիսկ է COVID19 համավարակը: Եթե երկրորդ - երրորդ ալիք սկսվի և նորից հայտարարվի ուժեղացված կարանտին, որը բնականաբար արգելք կհանդիսանա իրականացվող մեր աշխատանքին:

Հնարավոր այդ ռիսկի դեպքում մենք ունենք բոլոր գործիքները և հնարավորությունները արագորեն վերակազմակերպելու մեր աշխատանքները օնլայն ձևաչափով:

Ծրագրի աշխատակազմը
Ծրագրի ղեկավար՝ Սամվել Մկոյան

2010թ.ից աշխատում է ՀԿ դաշտում: 100-ից ավել ծրագիր է ղեկավարել, այդ թվում ՀՀ ԿԳՄՍ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրեր: (CV-ն տես կից)

Պատասխանատվության շրջանակը ծրագրում '

-Նախապատրաստական աշխատանքների կազմակերպում՝ ծառայությունների, ապրանքների ձեռբերում, մասնակիցների հարցազրույցներ

-Ծրագրի ընթացքի մոտիտորիգ և գնահատում

-Հաշվետվությունների կազմում և այլ հարցեր

Ծրագրի համակարգող՝ Կամո Մելիքյան

Ունի մեծ փորձառություն ծրագրեր կազմակերպելու և իրականացնելու: (CV-ն տես կից)

Պատասխանատվության շրջանակը ծրագրում '

- Համակարգել ծրագրի ընթացիկ աշխատանքները,

-Դասընթացավարների հետ կապ, ծրագրի տեխնիկական հարցեր,

-Դասընթացի կազմակերպում, մասնակիցների, դասընթացավարների տեղափոխության հարցերի կազմակերպում,

-Նախապատրաստական գործեր, տպագրական հարցերի կազմակերպում,

-Մասնակիցների հետ կապ, կազմակերպչական հարցեր և այլն

Լիլիթ Մրտչյան

Դասընթացավար

Երիտասարդների հետ աշխատանքի մեծ փորձ ունի: (CV-ն տես կից)

Պատասխանատվության շրջանակը ծրագրում՝ դասընթացի իրականացում

Մարիաննա Ջաղացպանյան

Դասընթացավար (CV-ն տես կից)

Պատասխանատվության շրջանակը ծրագրում՝ դասընթացի իրականացում

Ֆլորա Վարդանյան

Դասընթացավար (CV-ն տես կից)

Պատասխանատվության շրջանակը ծրագրում՝ դասընթացի իրականացում

Ժաննա Բախչագուլյան

Դասընթացավար (CV-ն տես կից)

Պատասխանատվության շրջանակը ծրագրում՝ դասընթացի իրականացում

Լուսանկարիչ՝Անի Անտոնյան

Պատասխանատվության շրջանակը ծրագրում՝ դասընթացի ֆոտոնկարահանում

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

	ՀՀ, Արցախի և սփյուռքի երիտասարդների երկխոսության կամուրջ						
	անվանումը	բովանդակությունը	Կազմակերպության կողմից կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Միջոցառման իրականացման վերջնաժամկետը	Հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1.	Նախապատրաստական աշխատանքներ	Մասնակիցների ընտրություն, ծառայությունների, ապրանքների ձեռքբերում, մասնագետների հետ պայմանավորվածություններ	Հայտարարությունների կազմում տարածում, մասնակիցների հայտերի ուսումնասիրում, հարցազրույցներ, ծառայությունների պայմանագրերի կնքում	Միջոցառման արդյունքում կընտրվեն 30 մասնակից՝ 10 երիտասարդ ՀՀ-ից, 10 երիտասարդ Սփյուռքից, 10 երիտասարդ Արցախից: Ակնկալում ենք ծրագրի մասնակիցների համար սահմանված չափանիշներին համապատասխան մասնակիցների ընտրություն: Ծառայություններ ծրագիրը իրականացնելու համար:	Հակտեմբերի 28	2021 թվականի դեկտեմբերի 10 Մասնակիցների ցուցակի պատճենի ներկայացում, ծառայությունների պայմանագրեր, նախահաշիվներ:	424 600
2.	Դասընթաց Ծաղկաձորում	Ծրագրին մասնակցելու են 18-30 տարեկան երիտասարդ Հայաստանից, Արցախից և Սփյուռքից:	Տեղի է ունենալու եռօրյա ինտենսիվ դասընթաց	Դասընթացի արդյունքում կունենանք՝ -Ընդհանուր հարթակ, որը կմիավորի 30 Հայ երիտասարդի՝ ՀՀ-ից, Արցախից և սփյուռքից, -Համագործացություններ ՀՀ-ի, Արցախի և սփյուռքի	Հոկտեմբերի 31	2021 թվականի դեկտեմբերի 10 Ծրագրի ընթացքից նկարներ, գնումների մասին պայմանագրեր	1 447 500

				երիտասարդների միջև, -Առավել մրցունակ, շփման, համագործացության, արագ ինքնակազմակերպման և ինքնակարգավորման հմտություններով գինված 30 Հայ երիտասարդ: Ծրագրի արդյունքնում հարցում և հետադարձ կապ մասնակիցների կողմից:		ներկայացնել:	
3.	Ծրագրի ամփոփում, գնահատում: Հաշվետվության կազմում և ներկայացում	Ծրագրի արդյունքների ամփոփում: Կգնահատենք՝ ինչ արդյունքներ ենք գրանցել, ինչ բացթողումներ են եղել, ինչը կարելի էր ավելի լավ անել ու ինչքանով ենք հասել մեր նպատակին: Կնքված պայմանագրի կետերին համապատասխան հաշվետվության ներկայացում:	Ծրագրի ավարտին կկազմվեն ֆինանսական և բովանդակային հաշվետվություններ և կներկայացվեն ՀՀ ԿԳՄՍ նախարարություն:	Ծրագրի վերջում ստացված արդյունքների համապատասխանություն սկզբում նախանշված արդյունքների հետ: Պատշաճ հաշվետվության ներկայացում:	Նոյեմբերի 22	2021 թվականի դեկտեմբերի 10 Ծրագրի ընթաքցոում արված բոլոր գործարքների, գնումների մասին փաստաթղթերի ներկայացում: Ներկայացնել նաև ծրագրի արդյունքների մասին նկարագրական հաշվետվություն և նկարներ ընթացքից:	372 000

	Ընդամենը՝ 2 244 100
	ԱԱՀ՝ 448.200
	Ընդամենը՝ 2,692.920

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝
Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/

Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Սփյուռքահայ ուսանողների խորհուրդ» ԵՀԿ
ք.Երևան, Մովսես Խորենացի 15
mkoyans@gmail.com

բանկ՝ Արարատբանկ ԲԲԸ

մ/հ հասցե՝ Էլիտ Պլազա, Մովսես Խորենացի15

Հ/Հ1510038405360100 , ՀՎՀՀ 01248707

ՀԿ-ի ղեկավար՝

Սամվել Մկոյան

/ստորագրություն/

Կ.Տ.

15.10.2014 ԵԶԴՍ 06 Հավելված 2
ծածկագրով
ամաշնորհային մրցույթի հրավերի

Հ/Հ	Բյուջեի տողի նկարագրական	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք	Պահանջվող գումար	Համաֆինանս. (ՀՀ բաժին)	Ընդհանուր Պահանջվող
	Աշխատավարձ						
Ա1	**Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ**						
	Ծրագրի ղեկավար	անգամ	1	132000	132000	0	132000
	Ծրագրի համակարգող	անգամ	1	140000	140000	0	140000
	Լուսանկարիչ	անգամ	1	100000	100000	0	100000
	Թրեյնր /3 օր*9 դասընթաց/	դասընթաց / օր	27	3500	94500	0	94500
Ընդամենը Ա					**466500**		**466500**
Բ	**Ծրագրային ծախսեր**						
	Կեցություն /3 օր* 33 մարդ/	օր/մարդ	99	10000	990000		990000
	Սուրճի ընդմիջում /3 օր*2անգամ*35 մարդ/	օր / անգամ / մարդ	210	1500	315000		315000
	Պրոյեկտորի վարձակալություն	օր	3	16000	48000		48000
	Վկայականի դիզայն	անգամ	1	5000	5000		5000
	Վկայականի տպագրություն	հատ	30	500	15000		15000
	Բանների դիզայն	անգամ	1	5000	5000		5000
	Բանների տպագրություն	հատ	1	12000	12000		12000
	Լոգոյով գրիչ	հատ	30	450	13500		13500
	Լոգոյով նոթատետր	հատ	30	700	21000		21000
	Ֆլիպ չարտ	հատ	8	3300	26400		26400
	Թուղթ A4	տուփ	2	2100	4200		4200
	Թուղթ A2	հատ	40	100	4000		4000
	Թուղթ A1	հատ	50	130	6500		6500
	Գունավոր կպչուն թուղթ	հատ	10	900	9000		9000
	Մարկեր	հատ	30	220	6600		6600
	Թղթապանակ	հատ	30	500	15000		15000
	Լեգո	հատ	10	4300	43000		43000
	Բեյջ	հատ	30	280	8400		8400
Ընդամենը Բ					**1547600**		**1547600**
Գ	**Գործուղում**						
	Տաքսի (Երևան-Ծաղկաձոր-Երևան)	անգամ	10	10400	104000		104000
	Ավտոբուս (Երևան-Ծաղկաձոր-Երևան)	անգամ	1	126000	126000		126000
Ընդամենը Գ					**230000**		**230000**
Ընդամենը					**2244100**		
ԱԱՀ					**448820**		
Ընդամենը					**2692920**		

Հ/Հ	Բյուջեի տողի նկարագրական	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)	Ընդհանուր Բյուջեի տողի նկարագրություն
	Աշխատավարձ		
Ա1	**Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ**		
1	Ծրագրի ղեկավար	132000	Ծրագրի ղեկավարի վարձատրությունը ամբողջ ծրագրի համար
2	Ծրագրի համակարգող	140000	Ծրագրի համակարգողի վարձատրությունը ամբողջ ծրագրի համար
3	Լուսանկարիչ	100000	Ծրագրի տեսանելիության համար ամբողջ ընթացքը լուսանկարվելու է
4	Թրեյներ	94500	Ծրագրի ընթացքում լինելու են 9 սեսիաներ յուրաքանչյուրը 3 ժամ տևողությամբ
Ընդամենը Ա		**466500**	
Բ	**Ծրագրային ծախսեր**		
	Կեցություն	990000	Եաղկաձորի հյուրանոցներից մեկում (ընդհանուր 33 մասնակից 3 օր = 99)
	Սուրճի ընդմիջում	315000	մասնակիցների և թրեյներների համար ավելի արդյունավետ աշխատելու և միմյանց հետ շփվելու
	Պրոյեկտորի վարձակալություն	48000	Տրվող նյութը ավելի պատկերավոր ներկայացնելու համար
	Վկայականի դիզայն	5000	Մասնակիցներին տրվելու է վկայական ծրագրի լոգոյով
	Վկայականի տպագրություն	15000	Մասնակիցներին տրվելու է վկայական ծրագրի լոգոյով
	Պաստառի դիզայն	5000	Ծրագրի տեսանելիությունը ապահովելու համար լոգոներով պաստառ է տպվելու
	Պաստառի տպագրություն	12000	Ծրագրի տեսանելիությունը ապահովելու համար լոգոներով պաստառ է տպվելու
	Լոգոյով գրիչ	13500	Ծրագրի արդյունավետության համար փաթեթ է տրվելու մասնակիցներին, որի մեջ ներառված է
	Լոգոյով նոթատետր	2100	Ծրագրի արդյունավետության համար փաթեթ է տրվելու մասնակիցներին, որի մեջ ներառված է
	Ֆլիպ չարտ	26400	Պրակտիկ աշխատանքների համար
	Թուղթ A4	4200	Պրակտիկ աշխատանքների համար
	Թուղթ A2	4000	Խմբային աշխատանքների համար
	Թուղթ A1	6500	Խմբային աշխատանքների համար
	Գունավոր կպչուն թուղթ	9000	Խմբային աշխատանքների համար

	Մարկեր	6600	Խմբային աշխատանքների համար
	Թղթապանակ	15000	Ծրագրի արդյունավետության համար փաթեթ է տրվելու մասնակիցներին, որի մեջ ներառված է
	Լեգո	43000	Խմբային վարժությունների համար
	Բեյջ	8400	Ծրագրի արդյունավետության համար փաթեթ է տրվելու մասնակիցներին, որի մեջ ներառված է
Ընդամենը Բ		**1547600**	
Գ	**Գործուղում**		
	Տաքսի (Երևան-Ծաղկաձոր—Երևան)	104000	Աշխատակազմի և թրեյներների տեղափոխման համար
	Ավտոբուս (Երևան—Ծաղկաձոր—	126000	Մասնակիցների տեղափոխման համար, 32-35 տեղանոց բարձրակարգ ավտոբուսով
Ընդամենը Գ		**230000**	
Ընդամենը		**2244100**	
ԱԱՀ		**448820**	
Ընդամենը		**2692920**	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Երևան, Վ. Սարգսյան 3

Կառավարական տուն N 2

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732

Պատվիրատուի ստորագրությունը

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝

Վահրամ Գասպարյան

Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

Սփյուռքահայ ուսանողների խորհուրդ» ԵՀԿ ք.Երևան, Մովսես Խորենացի 15

mkoyans@gmail.com

բանկ ՝ Արարատբանկ ԲԲԸ

մ/ճ հասցե՝ Էլիտ Պլազա, Մովսես Խորենացի15

Հ/Հ1510038405360100 , ՀՎՀՀ 01248707

ՀԿ-ի ղեկավար՝

Սամվել Մկոյան

Կ.Տ.